Ընտանեկան պատմության միջոցառում

«Կարո՞ղ եք ինձ մեկ այլ ընտանեկան պատմություն պատմել»,- Խնդրեց Լորենը:

Լյուսի Սթիվենսոն Էվել
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Վանուատուում:

Լորենը ժպտաց, երբ երգում էր երգի վերջին բառերը: Նրանք նոր էին ավարտել Երեխաների միության երգեցողության ժամը: Այժմ դասի ժամն էր:

Բայց նախ քույր Թալեոն ոտքի կանգնեց: «Ցանկանում եմ ձեզ պատմել Երեխաների միության միջոցառման մասին, որը շուտով տեղի կունենա», - ասաց նա: «Մենք ցանկանում ենք, որ ձեզանից յուրաքանչյուրը որևէ բան սովորի իր ընտանիքի մասին: Հարցրեք ձեր ծնողներին իրենց ընտանեկան պատմությունների մասին: Այնուհետև, միջոցառման ժամանակ ձեզանից յուրաքանչյուրը կարող է կիսվել իր սովորածով»:

Երբ Լորենը եկեղեցուց վերադարձավ տուն, նա ոգևորված էր: Նա գտավ մի մեծ թուղթ և դրեց սեղանին: Անհամբեր սպասում էր, որ տեղեկություններ իմանար իր ընտանիքի մասին:

Լորենը թղթի վրա նկարեց տոհմածառ: Մայրիկն ու հայրիկը օգնեցին նրան գրել բոլոր անունները: Հետո նա պաստառի վրա սոսնձեց իր ընտանիքի անդամների նկարները:

«Քո մեծ տատի անունը նույնպես Լորեն էր», - ասաց մայրիկը: «Մենք քեզ նրա անունով ենք կոչել»:

«Օ՜հ», - գոչեց Լորենը:

«Լորեն տատիկը շատ սիրալիր անձնավորություն էր»: Մայրիկը ժպտաց: «Երբ գյուղի մյուս մարդկանց վառելափայտը վերջանում էր, Լորեն տատիկը կիսվում էր նրանց հետ»:

Իր ընտանիքի մասին սովորելը զվարճալի էր: «Կարո՞ղ եք ինձ մեկ այլ ընտանեկան պատմություն պատմել»,- խնդրեց Լորենը:

«Հայրիկը կարող է պատմել քեզ առաջին անգամ տաճար գնալու մասին», - ասաց մայրիկը: «Նա ընդամենը վեց տարեկան էր: Նա իր ծնողների հետ երկար ճամփորդեց դեպի Նոր Զելանդիայի տաճար»:

Լորենին դուր էր գալիս լսել տաճարի մասին: «Պատմիր ինձ այդ պատմությունը, հայրիկ»,- ասաց նա:

«Սկզբում մենք ինքնաթիռ նստեցինք Նոր Զելանդիա հասնելու համար: Ապա ավտոբուս նստեցինք: Դա երկար ճամփորդություն էր»: Հայրիկը Լորենին ցույց տվեց տաճարի նկարը: «Վերջապես ես ու ծնողներս ներս մտանք: Մենք կնքվեցինք որպես ընտանիք: Դա նշանակում է, որ մենք կարող ենք հավերժ միասին լինել»:

Այդ լսելով՝ Լորենը ջերմ զգացողություններ ունեցավ: Նա ուրախ էր, որ կարողացավ պատմություններ լսել իր ընտանիքի մասին:

Վերջապես եկավ Երեխաների միության միջոցառման օրը: Լորենը օգնեց մայրիկին և քույր Թալեոյին ամեն ինչ պատրաստել եկեղեցու շենքում:

Ապա նրանք լսեցին մի քանի հրաշալի նորություններ: Իրենց կղզում տաճար էր կառուցվելու:

Լորենը շատ երջանիկ էր: Երբ նա բավականաչափ մեծանար տաճար մտնելու համար, ընդհանրապես ստիպված չէր լինի հեռու ճամփորդել:

Այդ երեկո Լորենի բոլոր ընկերները ներկա էին Երեխաների միության միջոցառմանը: Երեխաները հերթով կիսվում էին իրենց ընտանիքի մասին սովորածով: Երբ եկավ Լորենի հերթը, նա ցուցադրեց իր տոհմածառի պաստառը:

«Ինձ շատ դուր եկավ իմ ընտանիքի մասին նոր բաներ իմանալը», - ասաց նա: «Ես իմացա, որ ինձ կոչել են իմ մեծ տատի անունով: Ես նաև իմացա, թե ինչպես է իմ ընտանիքն առաջին անգամ տաճար գնացել: Տաճարը կարող է օգնել մեր ընտանիքներին հավերժ միասին լինել»: Ջերմ զգացումները վերադարձան: «Ես անչափ ուրախ եմ, որ մենք տաճար կունենանք այստեղ՝ Վանուատուում»:

Լորենը դեմքի լայն ժպիտով վերադարձավ ու նստեց իր տեղը: Նա երախտապարտ էր, որ կարողացավ ավելի նմանվել Հիսուսին: Եվ նա երախտապարտ էր տաճարի համար: Անհամբեր սպասում էր, որ մի օր պիտի ներս մտներ տաճար: ●

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ամեն շաբաթ եկեղեցում դուք կարող եք այցելել Երեխաների միություն ձեր ծխի կամ ճյուղի մյուս երեխաների հետ: Երբեմն նաև Երեխաների միության միջոցառումներ են անցկացվում շաբաթվա այլ օրերին: Դուք կարող եք մասնակցել այդ միջոցառումներին, որտեղ կսովորեք Հիսուսի մասին և կզվարճանաք:

ՆԱՄՍԵՄԻ ՀԵՐԻՍԱՆ ԷՄԻԼԻ ՈՒԵՅԿԻՆ